***Կարգապահական գործ թիվ* ԿԳ-24175**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԿԱՐԵՆ ՌԱՖԱՅԵԼԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետև նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Վահե Աստվածատրյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Կարինե Բաղդասարյանի, Միքայել Դանիելյանի, Գուրգեն Թորոսյանի, Արաքս Վարդանյանի և Վահագն Քեշիշյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ փաստաբան Կարեն Հովհաննիսյանի,

քննության առնելով փաստաբան **Կարեն Ռաֆայելի Հովհաննիսյանին (այսուհետև նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 1212) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության պետ Կարեն Գրիգորյանը **(այսուհետև նաև՝ Դիմող)**, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետև՝ Պալատ),** հայտնել է, որ փաստաբան Կարեն Հովհաննիսյանը թիվ 29109023 քրեական վարույթի շրջանակներում իրականացված առերես հարցաքննության ընթացքում սկսել է «սադրել»՝ ստեղծել բախումային իրավիճակ, որպեսզի խաթարի քննչական գործողության բնականոն ընթացքը, մասնավորապես՝ վկայի պատասխանի ժամանակ ընդհատել է նրան, սկսել մեկնաբանել վկայի պատասխանը՝ բղավելով իբրև թե կարգի հրավիրել վկային, սկսել է գոռգոռալ ու հայտարարել, որ այդ պահից հարցաքննությունը չի շարունակվում, ինքն է այդպես որոշել, որից հետո առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության և նրա հորդորներին

Թիվ ԿԳ-24175-2-Ա
26.02.2025թ.

հակառակ պաշտպանյալին թողել է քննչական գործողության վայրում և լքել է քննչական սենյակը, որոնք ըստ Դիմողի անհարգալից գործողություններ են և չեն բխել փաստաբան Կարեն Հովհաննիսյանի պաշտպանյալի իրավունքները պաշտպանելու անհրաժեշտությունից, չեն հետապնդել որևէ իրավաչափ նպատակ և խաթարել են քննչական գործողության բնականոն ընթացքը:

Դիմողը ներկայացրել է քննչական գործողության մի հատվածի տեսագրությունը:

Դիմողը խնդրել է քննարկել Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 20.12.2024 թվականին Դիմողին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք)** 39.5 հոդվածի 4-րդ մասին համապատասխան գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Դիմողը որևէ ապացույց չի ներկայացրել:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Կարեն Հովհաննիսյանին առաջարկվել է՝ Օրենքի 39.2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն ներկայացնել բացատրություն Կարեն Գրիգորյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ *Դիմողը Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմում ներկայացնելու պատշաճ սուբյեկտ չէ, քանի որ ինքը սույն դեպքում չի հանդիսանում քրեական վարույթն իրականացնող մարմին:*

Ըստ Փաստաբանի՝ պետք է ներկայացվեին առերեսման ամբողջական տեսագրությունը, ինչպես նաև մյուս առերեսումների տեսագրությունները, որոնցից պարզ կլիներ, թե քննիչի կողմից դրսևորված ինչպիսի ապօրինությունների է բախվել Փաստաբանը: Մասնավորապես՝ առերես հարցաքննությունների ժամանակ վկան կատարել է վիրավորական բնույթի գործողություններ, որոնք քննիչի կողմից չեն կանխվել: Ինքը գրավոր կերպով բացարկ է հայտնել քննիչին, սակայն քննչական գործողությունն իրականացվել է մինչ նշված միջնորդության կապակցությամբ որոշման կայացումը:

Փաստաբանը նշել է, որ ինքը վարույթն իրականացնող մարմնի հանդեպ չի կատարել որևէ անհարգալից գործողություն, իր վարքագիծը եղել է իրավաչափ և բխել է իր վստահորդի շահերից, ինքը թույլ չի տվել որևէ խախտում, որը կարող է հանգեցնել կարգապահական պատասխանատվության:

Բացատրությանը կից ներկայացվել են ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին և Գլխավոր դատախազին ուղղված հանցագործության մասին երկու հաղորդումները, քննիչ Ա. Մխեյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին դիմում-միջնորդությունը՝ ուղղված ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովին:

Փաստաբանը խնդրել է մերժել Կարեն Գրիգորյանի ներկայացրած կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ դիմումը:

Սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 20.12.2024 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

30.12.2024թ. Փաստաբանը ներկայացրել է բացատրություն և հայտնել, որ 19.10.2024թ. ՀՀ ՔԿ Արագածոտնի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ա. Մխեյանի կողմից ակնհայտ ապօրինի որոշում է կայացրել «Փաստաբանին վարույթից հեռացնելու մասին»:

Փաստաբանը հայտնել է, որ նշված որոշման արդյունքում զրկված է ապացույցներ ձեռք բերելու և ներկայացնելու հնարավորությունից:

Փաստաբանը դիմումին կից ներկայացրել է Փաստաբանին վարույթից հեռացնելու մասին 19.10.2024թ. որոշման պատճենը:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 14.11.2024թ. թիվ 399-Ա/ԿԳ-24175 որոշման հիման վրա փաստաբան Կարեն Հովհաննիսյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** 6.1.1 և 6.1.3 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

18.11.2024թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Գարիկ Հախնազարյանին (**այսուհետև՝ նաև Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 17.01.2025թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված է համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-ին կետում նշված փաստը:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 17.01.2025թ.:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 26.02.2025թ. ժամը 19:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք. Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաստատված է համարում հետևյալ փաստը.

1. Թիվ 29109023 քրեական վարույթի շրջանակներում իրականացված առերես հարցաքննության ընթացքում Փաստաբանը նշել է, որ *կարգի հրավիրեք վկային, ևս մեկ անգամ հանցագործության մասին հաղորդում եմ տալու, հենց հիմա հարցաքննությունը ավարտվում է,* որից հետո առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության և նրա հորդորներին թողել է քննչական գործողության վայրը և լքել է քննչական սենյակը: Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացատրություններով, ինչպես նաև տեսաձայնագրությամբ:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Կարեն Հովհաննիսյանը փաստաբան է հանդիսանում 15.10.2011թ., և 2020-2025թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Կարեն Հովհաննիսյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 6.1.1 և 6.1.3 ենթակետի պահանջների խախտման համար.

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 6.1.1-րդ ենթակետի համաձայն՝ Վստահորդի շահերը մինչդատական վարույթում ներկայացնելու ընթացքում փաստաբանի գործողությունները պետք է համապատասխանեն քրեական դատավարության օրենսգրքի և Օրենքի պահանջներին:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 6.1.1-րդ ենթակետը վկայակոչող (բլանկետային) է, քանի որ հղում է կատարում փաստաբանի և վարույթն իրականացնող մարմնի փոխհարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտին, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին, որի 49-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ պաշտպանը պարտավոր է՝ ենթարկվելու վարույթն իրականացնող մարմնի կարգադրություններին և դատական նիստի կարգին:

Սույն կարգապահական գործում առկա տվյալներից հետևում է, որ փաստաբան Կարեն Հովհաննիսյանը՝ հանդիսացել է թիվ 29109023 քրեական գործով մեղադրյալի պաշտպանը:

Նշված վարույթի շրջանակներում տեղի ունեցած առերես հարցաքննության ընթացքում Փաստաբանը արտահայտել է հետևյալը՝ *կարգի հրավիրեք վկային, ևս մեկ անգամ հանցագործության մասին հաղորդում եմ տալու, հենց հիմա հարցաքննությունը ավարտվում է,* որից հետո **առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության և նրա**

հորդորներին հակառակ պաշտպանյալին թողել է քննչական գործողության վայրում և լքել է քննչական սենյակը:

Հանձնաժողովը արձանագրում է, որ նման պայմաններում, Փաստաբանը ոչ միայն իրավունք չի ունեցել առանց քննիչի թույլտվության լքել սենյակը, այլ հակառակը՝ պարտավոր էր մնալ և ավարտին հասցնել քննչական գործողությունը, պաշտպանելով վստահորդի շահերը: Փաստաբանի առաքելությունը մինչդատական փուլում կայանում է նրանում, որ նա ներկա գտնելով և օգտագործելով մասնագիտական գիտելիքները հնարավորինս արդյունավետ պաշտպանի իր վստահորդի շահերը:

Հանձնաժողովը գտնում է, որ Դիմողի կողմից ներկայացրած քննչական գործողության նկարահանման տեսանյութից և Փաստաբանի բացատրությունից հետևում է, որ վերջինս չի հերքել քննչական գործողություններից առանց քննիչի թույլտվության և առանց այլ հարգելի ու թույլատրելի պատճառի հեռանալու հանգամանքը, ինչը Հանձնաժողովը գնահատում է որպես Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, Կանոնագրքի 6.1.1. ենթակետի խախտում:

Անդրադառնալով Փաստաբանի պնդմանն առ այն, որ քննչական գործողության տեսաձայնագրությունը հանդիսանում է ոչ թույլատրելի ապացույց, քանի որ որոշ չափով ամբողջական տեսանյութից կտրած է, Հանձնաժողովը արձանագրում է, որ տվյալ դեպքում Փաստաբանի թույլ տված խախտումը գնահատվում է վերջինիս կատարված արտահայտությունների և քննչական սենյակը լքելու տեսանկյունից: Այս առումով հատկանշական է, որ Փաստաբանը ընդունել է այն հանգամանքը, որ 3-րդ րոպեից մինչև տեսանյութի ավարտը, որտեղ պատկերված է Փաստաբանի խախտումը, առերևույթ բացակայում է մոնտաժը:

Ինչ վերաբերվում է Կանոնագրքի 6.1.3-րդ ենթակետին, ապա Հանձնաժողովը գտնում է, որ Պատասխանող Կարեն Հովհաննիսյանի վարքագիծը գնահատելու համար անհրաժեշտ է ստանալ հետևյալ իրավական հարցադրման պատասխանը.

- ***Արդյո՞ք թիվ 29109023 քրեական վարույթի շրջանակներում իրականացված առերես հարցաքննության ընթացքում Փաստաբանի դրսևորված վարքագծում առկա են նախաքննության մարմնի նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու հատկանիշներ:***

Պատասխանելով վերը նշված հարցադրումներին՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ի թիվս այլնի պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 6.1.3-րդ կետի համաձայն՝ *Մինչդատական վարույթում փաստաբանը պարտավոր է հարգանքով վերաբերվել դատավարության մասնակիցներին և մնալ կոռեկտության շրջանակներում, իսկ դատավարության մասնակիցների (մեղադրող կողմի և այլն) գործողություններին կամ ոչ կոռեկտ արտահայտություններին անդրադառնալ օրենքով սահմանված եղանակներով՝ դիմումների, հայտարարությունների, միջնորդությունների, բացարկների, առարկությունների կամ բողոքների միջոցով:*

Իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված

հասարակության մեջ փաստաբանը հատուկ դեր է ստանձնում: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ:

Փաստաբանի գործունեությունը փաստաբանի վրա դնում է բազմազան իրավական և բարոյական պարտականություններ այդ թվում հետաքննության, նախաքննության մարմինների, ինչպես նաև դատախազի հետ փոխհարաբերություններում, որտեղ փաստաբանը ներկայացնում է վստահորդի շահերը: Այս հարաբերություններում փաստաբանը պետք է հարգանքով վերաբերվի այն մարմիններին, որոնց հետ նա առնչվում է, պետք է ձգտի նպաստել իրավունքի զարգացմանը, իրավակիրառ պրակտիկայի բարելավմանը, ինչպես նաև արդարադատության պատշաճ և իրավաչափ իրականացմանը:

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի թիվ 16 (2013) կարծիքի 25-րդ կետի համաձայն՝ ... *Պրոֆեսիոնալ գործընկերների նկատմամբ հարգանքի, օրենքի գերակայության և արդարադատության արդար իրականացման հարգանքի՝ Փաստաբանների և իրավաբանների միությունների եվրոպական խորհրդի «Եվրոպայում իրավաբանի մասնագիտության հիմնարար սկզբունքների մասին» խարտիայում սահմանված սկզբունքներով պահանջվում է խուսափել գործընկերների, առանձին դատավորների և դատարանի ընթացակարգերի ու որոշումների վիրավորական քննադատությունից:*

Տվյալ դեպքում, սույն կարգապահական վարույթի շրջանակներում հետազոտելով քննչական գործողության տեսանյութը, որում Փաստաբանը օգտագործում է հետևյալ արտահայտությունները՝ ***Կարգի հրավիրեք վկային, ևս մեկ անգամ հանցագործության մասին հաղորդում եմ տալու, հենց հիմա հարցաքննությունը ավարտեք, չի շարունակվելու հարցաքննությունը*** **և առանց վարույթն իրականացնողի թույլտվության լքում քննիչի սենյակը:**

Փաստաբանի կողմից վերը նշված արտահայտությունները հնչեցվում են բարձր և ագրեսիվ տոնայնությամբ:

Հանձնաժողովը համադրելով վկայակոչած կանոնները և գործով հաստատված փաստական հանգամանքները՝ գտնում է, որ Փաստաբանը պարտավոր է պահպանել նվազագույն վարվելակերպի կանոնները, այն է՝ հարգանքով վերաբերվել դատավարության մասնակիցներին: Տվյալ դեպքում, Փաստաբանը հարգանքով չի վերաբերվել վարույթն իրականացնողին և վարույթի մասնակիցներին:

Հանձնաժողովը արձանագրում է նաև, որ Փաստաբանը պայմանավորված իր հատուկ կարգավիճակով, անկախ այն իրավիճակից, որում նա հայտնվում է, պարտավոր է մնալ զուսպ և հավասարակշռված:

Հաշվի առնելով ողջ վերոգրյալը՝ Հանձնաժողովը, գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, Դիմողի կողմից ներկայացրած բացատրությունները և ապացույցները, ինչպես նաև Փաստաբանի կողմից ներկայացրած դիրքորոշումներն իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ Փաստաբանի վարքագծում **առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 6.1.3 ենթակետի պահանջների խախտման հատկանիշները:**

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Հանձնաժողովը գտնում է նաև, որ Փաստաբանի կողմից Կանոնագրքի 6.1.1 ենթակետի խախտումը հանգեցնում է նաև Կանոնագրքի 6.1.3 ենթակետի և Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի խախտմանը:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը:

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ Փաստաբանի մոտ առկա տույժերը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Փաստաբանը 2020-2025թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ, այն հանգամանքը, որ **Փաստաբանը որևէ միտում չի ունեցել** անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու քննիչի և դատարավարությանը մասնակցի նկատմամբ, սակայն պարտավոր էր կանխատեսել այդ արտահայտությունների և գործողությունների կատարման հետևանքները՝ փաստաբանի, առավելապես փաստաբանական ինստիտուտի հասարակության կողմից ընկալման համար, Հանձնաժողովը գտնում է, որ սույն կարգապահական գործով, որ Փաստաբանի նկատմամբ պետք է կիրառել ամենամեղմ՝ «նկատողություն» կարգապահական տույժի տեսակը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի և 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Կարեն Ռաֆայելի Հովհաննիսյանի (արտոնագիր՝ թիվ 1212) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «նկատողություն»՝ «Փաստաբանության

մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 6.1.1 և 6.1.3 ենթակետերի պահանջների՝ սույն որոշմամբ արձանագրված խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-24175-2-Ա
26 փետրվարի 2025թ.
ք.Երևան